ՀԱՅՐԵՆԻՔ – ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ՀՀ ԵՐԵՔ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՕՐՈՔ

ՄԱՅՐԱՆՈՒՇ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայկական սփյուռք, Հայաստանի Հանրապետություն, Հայրենիք – Սփյուռք հարաբերություններ, գերակա ուղղություններ, համահայկական ծրագրեր, զարգացում, համաժողովներ:

21-րդ դարում արագորեն աճում է ոչ միայն իրենց հայրենիքից դուրս ապրող մարդկանց թիվն, այլև ավելի ու ավելի է մեծանում այն երկրների թիվը, որոնք ձգտում են մշակել իրենց սփյուռքերի հետ հարաբերությունների ստեղծմանը, կառավարմանն ու ակտիվացմանն ուղղված հստակ ու շարունակական ռազմավարություն:[1] Ժամանակակից աշխարհում սփյուռք ունենալը վաղուց արդեն դադարել է առանձին երկրների մենաշնորհը լինել:[2] Միգրացիոն մեծածավալ հոսքերի հետևանքով աշխարհի գրեթե բոլոր պետություններն այսօր ունեն իրենց սփյուռքը:[3] Սփյուռքները մեծ ազդեցություն ունեն ընդունող երկրներում[4] և ներկա աշխարհում դժվար է վիճարկել սփյուռքների դերակատարությունը ինչպես միջազգային հարաբերություններում, այնպես էլ հայրենի ու ընդունող պետությունների արտաքին քաղաքականությունների մեջ: Յուրաքանչյուր պետություն, ելնելով իր հնարավորություններից, խնդիրներից ու մարտահրավերներից, սփյուռքի առանձնահատկություններից, մշակում և իրականացնում է համապատասխան ռազմավարություն արտերկրի հայրենակիցների հանդեպ:[5]

---

[1] Տե՛ս **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.,** Տրանսֆորմացվող սփյուռքերի համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, Հայկական քաղաքագիտական հանդես 2, Երևան 2018, էջ 6, http://arjps.org/cover /arm/ ARJPS-2-2018.pdf

[2] Տե՛ս **Սիմավորյան Արիստակես, Հովյան Վահրամ, Վերանյան Կարեն,** Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ, Երևան 2017, էջ 4, http://www.mindiaspora.am/res/Hratara kumner/2017/Diaspora_Israil_Iran_Turkey_Azerbaijan.pdf

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **Кондратьева Тамара,** Диаспоры в современном мире: эволюция явления и понятия, http://www.perspektivy.info/srez/etnos/ diaspory_v_ sov remennom_mire_evolucija_javlenija_i_ponatija_2010-02-27.htm

[5] Տե՛ս **Սիմավորյան Արիստակես, ՀովյանՎահրամ, Վերանյան Կարեն,** Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ, Երևան 2017, էջ 4,

Հայաստանի Հանրապետությունը նույնպես մշակել և այսօր էլ շարունակում է մշակել Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների սեփական ռազմավարությունը:Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները ունեն երկար տարիների պատմություն: Այդ հարաբերությունները ձևավորվել են դեռևս Առաջին Հանրապետության տարիներին և, չնայած որոշակի վայրիվերումներին, շարունակվում են ցայսօր:

Ներկա աշխատանքի շրջանակներում անդրադառնում ենք Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների ներկա փուլին:

20-րդ դարի սկզբում Հայաստանից դուրս ապրող հայերի հավաքական անվանումը եվրոպական լեզուներում դարձավ «diaspora» տերմինը /հայկական անալոգը հանդիսանում է հայերեն «սփյուռք» տերմինը/:[1] Բացի «սփյուռք» տերմինից, մեզանում շրջանառության մեջ է դրվել նաև «ցրոնք» տերմինը:[2]

Հայերի ընդհանուր քանակը ամբողջ աշխարհում կազմում է 10 – 12 միլիոն, որից միայն 3 միլիոնն է ապրում Հայաստանի Հանրապետությունում՝ ըստ պաշտոնական վիճակագրության:[3] Հայաստանը Իսրայելի և Իռլանդիայի հետ միասին դասվում է այն երկրների շարքին, որտեղ տիտղոսակիր էթնոսի մեծագույն մասը ապրում է հայրենի երկրի սահմաններից դուրս:[4]

Ուշագրավ է, որ Հայաստան – Սփյուռք գործակցության զարգացումը Հայաստանի իշխանությունների կողմից դիտարկվում է որպես պետական քաղաքականության առանցքային ուղղություն:[5]1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց անկախության գործընթացի

---

http://www.mindiaspora.am/res/Hratarakumner/2017/Diaspora_Israil_Iran_Turkey_Azerbaijan.pdf

[1] Տե՛ս **Дятлов В., Мелконян Э.,** Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван 2009, с7.

[2] Տե՛ս **Եղիազարյան Ա.,** Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, էջ 34, http://www.armin.am/images/ menus/1929/Arman_eghiazaryan.pdf

[3] Տե՛ս **Ռիտտեր Լորանս,** Հայկական ինքնությունը Սփյուռքում. Արդիականության և հայապահպանման միջև, http://repairfuture.net/ index.php /hy/ identity-standpoint-of-armenian-diaspora-ar/armenian-identity-in-the-diaspora-between-modernity-and-preservation-armenian

[4] Տե՛ս **Арутюнов Сергей Александрович, Козлов Семен Яковлевич** Диаспоры: скрытая угроза или дополнительный ресурс, http://www.ng.ru/ science/2005-11-23/14_diaspory.html, 23.11.2005:

[5] Տե՛ս Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. Զարգացման հեռանկարներ, Հետազոտական խմբի ղեկավար՝ **Ավետիսյան Սամվել,** Երևան, Տնտեսագետ հրատարակչություն 2015, էջ 102:

սկիզբը:[1] Անկախ պետականության հիմնմանը նպատակաուղղված այդ կարևոր իրավական փաստաթուղթը բաղկացած էր 12 կետից և նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման հիմնական ուղիները:[2] Անկախության հռչակագրի ընդունումը հայոց պետականության զարգացման պատմության մեջ սկզբնավորեց նոր՝ Հայաստանի երրորդ հանրապետության շրջանը:[3] Փաստաթղթի՝ մեզ համար անչափ հետաքրքրական կետը 4 – րդն է: Այստեղ նշվում էր հետևյալը. «Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի»:[4]

Փաստորեն,Անկախության հռչակագիրը դառնում էր Հայաստանի երրորդ Հանրապետության՝ Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները սկզբնավորող թերևս առաջին փաստաթուղթը: Հռչակագիրը ՀՀ քաղաքացիության իրավունք էր շնորհում արտերկրում բնակվող մեր հայրենակիցներին: Սա անկախության կերտման ճանապարհի կարևորագույն քայլերից մեկն էր: Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ նման բան երազել անգամ հնարավոր չէր նախորդ՝ Խորհրդային վարչակարգի պայմաններում: Եվ եթե մինչ այդ, Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները կարելի էր բնութագրել որպես հումանիտար – մշակութային, ապա Երրորդ հանրապետության ստեղծմամբ սկիզբ դրվեց Հայրենիք – Սփյուռք հասարակական - քաղաքական հարաբերություններին:

1991թ. սեպտեմբերի 21 – ին Հանրապետության տարածքում անցկացվեց հանրաքվե:[5] Քվեարկության դրվեց հետևյալ հարցը՝ «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարա-

---

[1] Տե՛ս **Վաղարշյան Արթուր,** Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասարակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը 1990 – 1991թթ., էջ 3, http://ysu.am/files/ 01A_Vagharshyan-1450343348-.pdf

[2] Տե՛ս **Ազիզբեկյան Ռ., Լ.,** Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը, էջ 16, http:// lraber.asj-oa.am/183/1/2_Azizbekyan_(16).pdf

[3] Տե՛ս **Վաղարշյան Արթուր,** Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասարակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը 1990 – 1991թթ., էջ 3, http://ysu.am/files/01A _Vagharshyan-1450343348-.pdf

[4] Տե՛ս ՀՀ Անկախության հռչակագիր, https://www.gov.am/am/independence/

[5] Տե՛ս Armenien, 21. September 1991 : Unabhängigkeit https://www.sudd.ch /ev ent.php?lang =en&id=am011991

կան պետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս»:[1]Երկու օր անց Գերագույն խորհուրդը հաստատեց. Հայաստանն ազատ, անկախ պետություն է:[2]

1991թ. փետրվարի 26 – ին ընդունվեց օրենք՝«Հասարակական քաղաքական կազմակերպությունների մասին», որում տրված էին այն հիմունքները, սկզբունքները, ըստ որոնց Հանրապետությունում կարող էին ձևավորվել և գործել հասարակական – քաղաքական կազմակերպություններ, քաղաքական կուսակցություններ:[3] Օրենքի ընդունումը մեծ խթան հանդիսացավ Հայկական ավանդական կուսակցությունների՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Ռամկավար Ազատական և Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունների համար, որոնք, երկարամյա ընդմիջումից հետո, վերադարձան Հայրենիք և, ստանալով պետական գրանցում, իրենց գրասենյակները հիմնեցին Հայաստանի Հանրապետությունում: Սկսվեց Հայրենիք – Սփյուռք բազմակողմանի գործակցության նոր շրջափուլը:

Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ Հայկական ավանդական կուսակցություններից Հայ Յեղափոխական Դաշնակցությունը սկզբնական շրջանում հակասությունների մեջ մտավ Հայաստանի Հանրապետության իշխանական էլիտայի հետ: Լարվածությունը այն աստիճանի հասավ, որ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր – Պետրոսյանը արգելեց ՀՅԴ – ի գործունեությունը երկրի ողջ տարածքում, իսկ ավանդական կուսակցություններից մյուսը՝ Ռամկավար Ազատական կուսակցությունը, պառակտվեց: Ինչ վերաբերվում է Սոցիալ- դեմոկրատական Հնչակյան կուսակցությանը, ապա հնչակյանները որդեգրեցին Հայաստանի Հանրապետության իշխանություններին աջակցելու քաղաքականություն և, կարելի է ասել, զերծ մնացին հալածանքներից:

1991թ. հոկտեմբերի 16 – ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական ընտրություններ՝ վեց թեկնածուների մասնակցությամբ:[4] Ձայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս) Հանրապետության առաջին նախագահ ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի նախա-

---

[1] Տե՛ս **Միհասյան Էդիկ,** Սոցիալ – տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990 – 2003 թթ.), Երևան 2003, էջ 26:

[2] Տե՛ս Անկախության ճանապարհը, 21 09 2012, https://www.youtube.com/ watch?v= T0Y qEyvijNU

[3] Տե՛ս **Աբրահամյան Հենրիկ,** Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2009, էջ 57:

[4] Տե՛ս **Միհասյան Է,** Հայաստանի անկախ հանրապետության քսանհինգամյա ուղին, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, Գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2017, էջ 20:

գահ Լևոն Տեր – Պետրոսյանը:[1] ՀՅԴ – ն առաջադրեց սեփական թեկնածուին՝ թատրոնի և կինոյի ճանաչված դերասան Սոս Սարգսյանին:[2]

Այդ ամենը հանգեցրեց նրան, որ երկրի իշխող վերնախավը, դրա մեջ վտանգ տեսնելով, արմատապես փոխեց իր վերաբերմունքը Հայ Յեղափոխական Դաշնակցության նկատմամբ:

Իշխանությունների հետ ՀՅԴ – ի տարաձայնությունները ի վերջո հանգեցրին կուսակցության դեմ սկսված հալածանքներին, որի արտահայտություններից մեկն էլ ՀՀ նախագահ Լևոն Տեր – Պետրոսյանի 1992թ. հունիսի 29 – ի ելույթն էր, որով ՀՀ նախագահը կուսակցությանը մեղադրեց աղետի գոտու և Արցախի համար հանգանակած գումարների յուրացման, Հայաստանի ժողովրդին պատերազմի մեջ ներքաշելու քաղաքականության, իշխանությունների հետ գործակցելու մերժման, իր շարքերից գործակցող անդամներին հեռացնելու, ՊԱԿ – ի գործակալ լինելու մեջ և այլն:[3] Դա լուրջ ազդանշան էր թե՛ ՀՅԴ – ին և թե՛ ողջ Սփյուռքին առ այն, որ Հայաստանի իշխանությունների համար անընդունելի է որևէ միջամտություն երկրի ղեկավարման գործում:[4] Երկրի նախագահն այդ առիթով հատուկ նշում էր, որ փոխադարձ անհասկացողությունն ու անվստահությունը կպահպանվեն այնքան ժամանակ, քանի դեռ Սփյուռքի առաջնորդները չեն հաշտվի այն մտքի հետ, որ քաղաքականությունը արվում է Հայաստանում:[5]Հալածանքների եզրափակիչ քայլը եղավ 1995թ. խորհրդարանական ընտրությունների նախօրյակին երկրի նախագահի 1994թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրով, ապա նաև ՀՀ Գերագույն դատարանի 1995թ. հունվարի 13-ի որոշմամբ ՀՅԴ – ի և նրա ուղեկից կազմակերպությունների գործունեության կասեցումը Հայաստանում՝ «Հասարակական – քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի խախտման մեղադրանքով:[6] Փակվեցին կուսակցության գրասենյակներն ու լրատվամիջոցները, բռնագրավվեցին ու թալանվեցին կուսակցական միջոցներն ու գույքը, ՀՅԴ մի շարք հայտնի գործիչներ ազատազրկվեցին:[7]

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **Մելքոնյան Էդուարդ**, Հայաստանի Երրորդ Հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Սփյուռքագիտություն, տեսության և պատմության հարցեր, Տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2012, էջ 105:

[3] Տե՛ս **Պետրոսյան Քնարիկ**, Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները 1988 – 2001թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2011, էջ 20:

[4] Տե՛ս **Մելքոնյան Էդուարդ,** Հայաստանի Երրորդ Հանրապետության և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Սփյուռքագիտություն, տեսության և պատմության հարցեր, Տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2012, էջ 105:

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Տե՛ս **Պետրոսյան Քնարիկ,** Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները 1988 – 2001թթ., Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2011, էջ 20:

[7] Տե՛ս նույն տեղում:

Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր – Պետրոսյանի այս քայլը, բնական է, չէր կարող բացասական չանդրադառնալ Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների վրա: Սփյուռքում մեծ դերակատարություն ունեցող Դաշնակցությունը արգելվում էր Մայր հայրենիքում: Դատապարտող խոսքերով հանդես եկան Սփյուռքի ականավոր դաշնակցական գործիչներ: Տարբեր համայնքներում տեղի ունեցան բողոքի ցույցեր: Սույն թեմային՝ բազմաթիվ պախարակող հոդվածներով,անդրադարձավ նաև կուսակցական մամուլը: Հայաստանի իշխանությունները փորձեցին վարկաբեկել այդ կուսակցությունների (ՀՅԴ, ՌԱԿ) գործունեությունը նաև արտասահմանում՝ մեծ հարված հասցնելով Հայրենիք – Սփյուռք հարաբերություններին:[1]

Այսօր, իսկ, թեպետ բավականին թվով համայնքներում նկատվում է եկեղեցուց աշխարհիկ հարցերի օտարման միտում, եկեղեցին մնում է Սփյուռքի ազգային կեցության հիմնական գրավականներից մեկը[2] և առանձնահատուկ դեր ունի Հայրենիք – Սփյուռք հոգևոր – մշակութային կապերը սերտացնելու, հայոց պետականության ամրապնդման գործին սփյուռքահայությանը ներգրավելու ասպարեզում:[3] Հայկական Սփյուռքի վրա հոգևոր ազդեցություն ունենալու համար նախագահ Լևոն Տեր – Պետրոսյանը ընտրեց Հայ առաքելական եկեղեցու վերամիավորման քաղաքականությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներքո:[4]

Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցին ունի հետևյալ կառուցվածքը՝ Ընդհանրական կաթողիկոսություն ամենայն հայոց (Ս. Էջմիածին), Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո (Անթիլիաս, Լիբանան), Երուսաղեմի հայոց պատրիարքություն, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն:[5]

Երկրի ղեկավարը նպատակադրվեց միավերել Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռներից երկուսը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունները, բնականաբար, Մայր Աթոռի գերակայության ներքո: Նկատի առնելով Կիլիկիո կաթողիկոսության և ՀՅԴ անվիճարկելի դերը և ազդեցությունը Սփյուռքում՝ նա այդ քայլով նախատեսում էր Մայր Աթոռի միջոցով մեծացնել Հայաստա-

---

[1] Տե՛ս **Մինասյան Էդիկ,** Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2013, էջ 379:

[2] Տե՛ս **Դալլաքյան Կառլեն,** Հայ Սփյուռքի պատմություն, (Համառոտ ակնարկ), Երևան 2004, էջ 57:

[3] Տե՛ս Հայ Սփյուռք Հանրագիտարան, Երևան 2003, էջ 693:

[4] Տե՛ս **Тунян В. Г.,** Армянская Апостольская церковь за рубежом. Начало XXI в., Ереван 2015, с 39:

[5] Տե՛ս Հայ Առաքելական եկեղեցի, http://etchmiadzinlibrary.am/hy/arme nia n-apostolic-church

նի Հանրապետության և նվազեցնել Կիլիկիո կաթողիկոսության ու ՀՅԴ – ի դերակատարությունը սփյուռքյան համայնքների վրա:Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ Լևոն Տեր – Պետրոսյանը թերագնահատել էր Կիլիկո կաթողիկոսության և ՀՅԴ լայն հնարավորությունները Սփյուռքում:

1994թ. օգոստոսի 18 – ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը:[1]Առաջացավ նոր կաթողիկոսի ընտրության հարցը: ՀՀ իշխանությունների ուշադրությունը կենտրոնացավ Կիլիկիո կաթողիկոս Գարեգին 2 – ի վրա:1995թ. Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Կիլիկիո կաթողիկոս Գարեգին 2 – ը, որը ընդունեց Գարեգին 1- ին Ամենայն Հայոց կաթողիկոս անվանումը:[2] 2001թ. Գարեգին 1 – ի մահից հետո Հայոց եկեղեցու գլխավոր առաջնորդը դարձավ Գարեգին 2 – րդ Ներսեսյանը, սակայն Մայր Աթոռի և Կիլիկիո կաթողիկոսության միավորումը այդպես էլ տեղի չունեցավ:[3]

Հայաստանի երրորդ Հանրապետության հիմնադրումից ցայսօր Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների առանցքային հարցերից է հանդիսանում Հայ – թուրքական հարաբերությունների և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնահարցը:

Մեկնաբանելով առաջին նախագահի օրոք վարած քաղաքականությունը՝ ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Ալեքսանդր Արզումանյանն ասել է. «Մեր օրոք ցեղասպանության հարցը չի եղել մեր արտաքին քաղաքականության հիմքում: Մենք այդ հարցը չենք արծարծել տարբեր ատյաններում, կամ արծարծել ենք, եթե կոնկրետ նպատակ ենք ունեցել այդ պահին… Հայ Դատի հարցը եղել է Սփյուռքի կազմակերպությունների մոդուս – վիվենդին…»:[4]

Ելնելով վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր – Պետրոսյանը գտնում էր, որ «քաղաքականությունը արվում է Հայաստանում» և Հայկական Սփյուռքը չպետք է ազդեցություն ունենա Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին, կամ նրա մասնակցությունը պետք է լինի չափա-

---

[1] Տե՛ս Հանգիստ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, Էջմիածին, Պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, օգոստոս, 1994թ. http://tert.nla.am/archive/ HGG% 20 AMSAGIR/echmiadzin-vagharshapat/1994/1994(8) .pdf

[2] Տե՛ս **Тунян В. Г.,** Армянская Апостольская церковь за рубежом. Начало XXI в., Ереван 2015, с 39:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **Անանյան Արամ,** Հայոց ցեղասպանությունը Հայ – թուրքական երկխոսության հարցի համատեքստում, էջ 9, http://genhist.asj-oa.am/116/ 1/ 3-27.pdf

զանց աննշան: Ինչ վերաբերվում է Հայրենիք – Սփյուռք հարաբերություններին, ապա նա քաղաքական այն ուղղեգիծն էր տանում, որ այդ հարցում օրակարգ սահմանողը պիտի դառնա պետական գործառույթներ ունեցող Հայաստանի Հանրապետությունը:Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում ՀՀ առաջին նախագահը դրսևորել է չափավոր քաղաքականություն՝ Հայ Դատի հետապնդումը թողնելով սփյուռքյան կառույցներին:

1998թ. փետրվարի 3 – ին Հայաստանի նախագահ Լևոն Տեր – Պետրոսյանը պարտադրաբար հրաժարական տվեց:[1] Նրան այդ պաշտոնում փոխարինեց վարչապետ Ռոբերտ Քոչարյանը:[2] Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների վերաբերյալ Ռոբերտ Քոչարյանը ուներ այլ մոտեցումներ և իրականացրեց այլ քաղաքականություն:Նախ, նա թույլատրեց Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Վերջինս էլ, նույն թվականին անցկացված նախագահական ընտրություններումսատարեց հենց Ռոբերտ Քոչարյանի թեկնածությունը: Դաշնակցության լեգալացումը դրական արձագանք գտավ Սփյուռքում: Դա կարևոր քայլ էր Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների ակտիվացման ճանապարհին:

1998թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո հայ – թուրքական հարաբերություններում Երևանի դիրքորոշման մեջ առաջ քաշվեց Հայոց ցեղասպանության խնդիրը, որը որոշ թուրք քաղաքագետներ բնութագրեցին որպես Թուրքիայի նկատմամբ Հայաստանի քաղաքականության կոշտացում:[3] Միջազգային ամբիոններից Ռոբերտ Քոչարյանը շարունակաբար տանում էր այն թեզը, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը անհրաժեշտություն է:[4] Նախագահը նշում էր նաև, որ 20-րդ դարի առաջին ոճրի դատապարտմանը միտված ջանքերը չեն դադարելու:[5] Իսկ Ամերիկա – թուրքական հեղինակավոր CNN-Türk հեռուստաալիքին տված հարցազրույցում Ցեղասպանության ճանաչման գործընթացի շարունակականության և վերջինիս առաջ տանող ուժի վերաբերյալ թուրք լրագրողի հարցին, նախագահը պատասխանեց, որ ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը աշխարհասփյուռ հայության օրինական պահանջն է, իր իսկ հայտարարությունը

[1] Տե՛ս **Astourian, Stephan H.,** From Ter-Petrosian to Kocharian: Leadership Change in Armenia, p 1-2, https://escholarship.org/uc/item/0c2794v4

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Անանյան Արամ,** Հայոց ցեղասպանությունը Հայ – թուրքական երկխոսության հարցի համատեքստում, էջ 9, http://genhist.asj-oa.am/ 116/1/ 3-27.pdf

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 10:

որակելով որպես հարցի շուրջ Հայաստանի դիրքորոշման մշակում:[1] Նա ընդգծեց նաև, որ Հայաստանի և Սփյուռքի ջանքերը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում միևնույն ուղղությանն են միտված:[2]

Փաստորեն, Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, հայ – թուրքական հարաբերությունների բարելավմանն ուղղված առանցքային հարցերից մեկը համարում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հիմնահարցը՝ կարևորելով Հայաստանի Հանրապետության և Հայկական Սփյուռքի միասնական ջանքերը այդ հարցում: Հարկ է նշել, որ նախագահը քաղաքական այդ գիծը պահպանեց իր կառավարման ողջ ընթացքում:

Ռոբերտ Քոչարյանի կառավարման տարիներին Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների զարգացմանն ուղղված կարևորագույն ձեռքբերումներից կարելի է համարել Հայաստան – Սփյուռք համաժողովների կազմակերպումը: 1998թ. դեկտեմբերի 24 – ին Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը ստորագրեց N194 հրամանագիրը 1999թ. սեպտեմբերին Երևանում համահայկական խորհրդաժողով հրավիրելու մասին:[3]Հրամանագրում նշվում էր Հայաաստան – Սփյուռք փոխհարաբերությունները համազգային խնդիրների լուծման ներկա պահանջներին համապատասխանեցնելու, ազգային միասնության գաղափարը արդյունավետ իրականացնելու, հիմնարար հայեցակարգ և անհրաժեշտ կազմակերպական կառույցներ ստեղծելու անհրաժեշտությունը:[4]Հաստատվեց կառավարական հանձնաժողովի կազմը, որը պարտավորվում էր մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության նախագահին ներկայացնել համահայկական խորհրդաժողովի կազմակերպման, անհրաժեշտ փաստաթղթերի ու ծրագրային մոտեցումների նախապատրաստման առաջարկություններ, նախապատրաստման աշխատանքներում ներգրավել Հայաստանի և Սփյուռքի համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների, գիտության և մշակույթի գործիչների, առանձին անհատների, ակտիվորեն համագործակցել Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հետ, աշխատանքներում ներգրավել Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչներին:[5] Հայտնի է, որ Հայկական Սփյուռքը իր կառուցվածքով չափազանց

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը 1999 թվականին Երևանում Համահայկական խորհրդաժողով հրավիրելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=2506&fbclid=IwAR273RhfCHwRS-bTfcMr6idj1lhqlQCl93c8cdSlki1ZvXKy_iwXUe2rvq4

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում:

խայտաբղետ է: Փաստորեն, այստեղ հաշվի էին առնվում բազմաշերտ Սփյուռքի բոլոր խավերը:

Հետագայում նախագահը ստորագրեց նաև մեկ այլ հրամանագիր, որում փոփոխության ենթարկեց կառավարական հանձնաժողովի կազմը:[1] Համաժողովը տեղի ունեցավ Երևանում, սեպտեմբերի 22 – 23 ին, որին մասնակցեցին շուրջ 1200 ներկայացուցիչներ՝ աշխարհի ավելի քան 50 երկրներից, Հայաստանից և Արցախից:[2] Հայաստան – Սփյուռք խորհրդաժողովում հնչեցին մոտ 70 ելույթներ, որոնք անդրադարձան արտագաղթին, Սփյուռքի անմիջական մասնակցությամբ Հայաստանի անկախ պետականության կայացմանը և երկրի տնտեսության վերելքին, Հայ Դատին, Հայոց ցեղասպանությանը, Սփյուռքում ազգապահպանության խնդիրներին, Արցախյան հիմնահարցին և հայ եկեղեցուն:[3] Խորհրդաժողովում տեղի ունեցավ կարևորագույն իրադարձություն, որը շրջադարձային նշանակություն ունեցավ Հայրենիք – Սփյուռք հետագա գործակցության համար. ընդունվեց «Հռչակագիր»[4] և «Արցախի մասին հայտարարություն»[5]: Հետագայում Հայրենիք – Սփյուռք խորհրդաժողովները դարձան Հայրենիք – Սփյուռք գործակցության առանցքային հանդիպումներից:

Հայաստան – Սփյուռք երկրորդ խորհրդաժողովը տեղի է ունեցել 2002թ. մայիսի 27 – 28 - ին Երևանում, որին մասնակցել են ՀՀ և ԼՂՀ պետական ներկայացուցիչներ, հասարակական, քաղաքական կազմակերպությունների, գիտության, կրթության, մշակույթի, տնտեսության և այլ բնագավառների ներկայացուցիչներ, ինչպես նաև սփյուռքյան համայնքային հոգևոր և աշխարհիկ կառույցների ներկայացուցիչներ:Խորհրդաժողովին մասնակցել են Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատվիրակությունները՝ Վեհափառ հայրապետի գլխավորությամբ, Հայ Կաթողիկե և Հայ Ավետարանական եկեղեցիները՝ իրենց գահակալ առաջնորդներով:[6] Խորհրդաժողովին ներ-

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանգիրը 1999 թվականին Երևանում հրավիրվող համահայկական խորհրդաժողովը նախապատրաստող կառավարական հանձնաժողովի նոր կազմը հաստատելու մասին, https://www.arlis.am/Document View.aspx ?docid=2605

[2] Տե՛ս Հայաստան - Սփյուռք համահայկական 1 – ին համաժողով, http://www.mindiaspora.am /am/HS_1_hamajoxov?fbclid=IwAR1H8C2Fa6bdJh0hQIvz9Kq3CLhsGuFikYZ16nQPFVSdGT3z OXFTW2HErXQ

[3] Տե՛ս **Պետրոսյան Քնարիկ,** Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները 1988 – 2001թթ., Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2011, էջ 46:

[4] Ավելի մանրամասն տե՛ս http://www.mindiaspora.am/res/ Hamajoxovner/ haytararutyun _1.pdf

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Տե՛ս http://www.mindiaspora.am/am/HS_2_hamajoxov

կա են եղել 52 երկրների 1400 պատվիրակներ, որի արդյունքում ընդունվել է «Հռչակագիր»[1], հաստատվել են գործնական ծրագրեր, որոշվել է ստեղծել 5 մասնագիտական խառը աշխատանքային խումբ:[2] Համաժողովի բացմանը ողջույնի խոսքերով հանդես են եկել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների ղեկավարները, Ամենայն Հայոց և Կիլիկիո կաթողիկոսները, համահայկական կազմակերպությունների ղեկավարները:[3]Խորհրդաժողովում հավանություն է տրվել հետևյալ յոթ գործնական ծրագրերին՝ 1/Դպրոցների համակարգչայնացում, 2/Ցեղասպանության կենտրոն, 3/Հայագիտական վիրտուալ համալսարան, 4/Ուսումնական ծրագրերի հանձնաժողով, 5/Համալսարանների հայ ուսանողների օժանդակության կազմակերպում, 6/Բժշկական տարածաշրջանային կենտրոն, 7/Սփյուռքի թանգարան:[4]

Հայրենիք – Սփյուռք համաժողովները հիրավի ունեցան դարակազմիկ նշանակություն մեր ժողովրդի երկու հատվածների փոխադարձ ճանաչողության, փոխադարձ օգնության և այլ բնագավառներում: Այս համաժողովների ընթացքում հանդիպում էին ամենատարբեր երկրների, ամենատարբեր համայնքների ներկայացուցիչներ, քննարկվում էին ամենատարբեր հարցեր՝ հայապահպանությունից մինչև տնտեսական ու սոցիալական խնդիրներ: Պատահական չէ, որ թե՛ ՀՀ, թե՛ ԼՂՀ, թե՛ եկեղեցական գործիչները և թե՛ սփյուռքյան կազմակերպությունների ներկայացուցիչները իրենց ելույթներում մեծապես կարևորում էին Հայաստան – Արցախ – Սփյուռք գործակցությունը կյանքի ամենատարբեր ոլորտներում: Այդ ամենը բխում էր ինչպես Հայկական պետականության, այնպես էլ՝ Սփյուռքի շահերից: Հզոր Սփյուռքը պատրաստ էր աջակցելու հայրենիքին, միևնույն ժամանակ գիտակցելով, որ իր թիկունքում մշտապես առկա է հայրենի պետականություն, և, որ ամենակարևորն է, հարկ եղած դեպքում կարող է դիմել և ստանալ Հայրենի պետության աջակցությունը:

Հայաստան – Սփյուռք երրորդ համաժողովը տեղի է ունեցել 2006թ. սեպտեմբերի 18 – 21 ին և նվիրվել է Հայաստանի գյուղական համայնքների (հատկապես սահմանամերձ, բարձրլեռնային և հեռավոր) զարգացման ծրագրին:[5]Գործնական առումով առավել մեծ կարևորություն է ներ-

[1] Տե՛ս http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/haytarurutyun_2.pdf

[2] Տե՛ս http://www.mindiaspora.am/am/HS_2_hamajoxov

[3] Տե՛ս Ելույթ Հայաստան-Սփյուռք համաժողովում, https://www.youtube. com/watch?v=z7_fjT2WDnM&fbclid=IwAR1ZyWr_gHCZoIFBvuskusXDyk NQ SCPvX9UWrZHF7ZPnQqIDJMHo jALGVuY, տե՛ս նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Հայաստան – Սփյուռք» երկրորդ խորհրդաժողովի բացման ժամանակ (27 մայիսի 2002թ.), Էջմիածին հանդես, Ե 2002, էջ 3:

[4] Տե՛ս http://www.mindiaspora.am/am/HS_2_hamajoxov

[5] Տե՛ս http://www.mindiaspora.am/am/HS_3_hamajoxov

կայացրել հայության առջև ծառացած մարտահրավերների և դրանք կոնկրետ ծրագրերի միջոցով հաղթահարելու հնարավորությունների հարցը (Հայրենիք – Սփյուռք գործակցության համակարգման հարցեր, հայապահպանության հիմնախնդիրներ, Ղարաբաղյան հիմնահարց):[1] Համաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Հայ Դատի, երկքաղաքացիության, միասնական ուղղագրության, արտագաղթի և այլ խնդիրների:[2] Այս խորհրդաժողովի շրջանակներում հայ ազգային ինքնությանը վերաբերող հարցերի շուրջ անցկացվեց ֆորում «Նոր պատասխաններ հին հարցադրումներին – Հայերը 21- րդ դարում» խորագրով[3] և ինչպես նախորդ համաժողովներին, այս համաժողովին նույնպես ընդունվեց «Հռչակագիր»[4]:

Աշխատանքի շրջանակներում նպատակահարմար ենք համարում անդրադառնալ նաև Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարությանը: Սփյուռքահայության հետ տարվող աշխատանքները պետական մակարդակով համակարգելու համար ՀՀ Արտաքին գործերի նախարարության կազմում գործել է Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն (2002թ.), հետագայում՝ Սփյուռքի պետական կոմիտե (2008թ. հունիս - հոկտեմբեր), որի հիման վրա 2008թ. ձևավորվել է ՀՀ Սփյուռքի նախարարությունը:[5]

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կառավարման տարիները աչքի ընկան Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների զարգացմամբ: Նա թույլատրեց Դաշնակցության գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում՝ շահելով Սփյուռքի համակրանքը (Սփյուռքի մեծ մասը դաշնակցականներ էին): Հայ – թուրքական հարաբերություններում ցուցաբերեց ավելի կոշտ քաղաքականություն՝ միջազգային տարբեր ամբիոններից հայտարարելով, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը Հայաստանի հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է՝ այդ հարցում հատուկ շեշտելով Սփյուռքի դերակատարությունը: Ռոբերտ Քոչարյանի իշխանության տարիներին հիմք դրվեց Հայաստան – Սփյուռք համաժողովներին, որոնք շարունակվեցին նաև հետագայում: Արտաքին Գործերի նախարարության կազմում ստեղծվեց Սփյուռքահայության հետ տարվող աշխատանքները համակարգող կառույց: Կազմա-

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/haytararutyun_3.pdf
[5] Տե՛ս https://www.mfa.am/hy/history-ministry/

կերպվեցին գիտական, կրթական, մշակութային և այլ բազմապիսի ու բազմաբնույթ միջոցառումներ:

Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները աննախադեպզարգացում ստացան ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի օրոք:

Հարկ է նշել, որ Սփյուռքի մեր հայրենակիցների հետ հարաբերությունները սերտացնելու և ավելի զարգացնելու թեման առկա էր Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրում, որում մասնավորապես ասվում էր. «Աշխարհով մեկ սփռված հայերի զգալի մասի քաղաքական, մշակութային, տնտեսական հետաքրքրությունների կենտրոնը Մայր հայրենիքն է: Աշխարհասփյուռ հայությունն իրապես շահագրգռված է Հայաստանի զարգացմամբ, ինչը նշանակում է, որ այսուհետ հնարավոր չէ մշակել և իրականացնել որևէ գլոբալ ծրագիր՝ առանց այս գործոնը հաշվի առնելու: Մեր մրցակցային առավելությունը համայն հայության միացիալ ներուժն է»:[1]

Ընտրվելով Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում՝ Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը շարունակեց նախընտրական ծրագրում Սփյուռքի մասով արծարծած քաղաքական գիծը: 2008 թ. ապրիլի 9 – ին տեղի ունեցած երդմնակալության արարողության ժամանակ հայտարարեց. «Կառուցելու ենք այն Հայաստանը, որը կմիավորի համայն հայությանը, այնպիսի Հայաստան, որը կլինի բոլոր հայերի հայրենիքը…»:[2]

Հաջորդ կարևորագույն քայլը Սփյուռքի նախարարության հիմնադրումն էր: Շուրջ մեկ տասնամյակ Սփյուռքի նախարարությունը դարձավ այն կարևորագույն կառույցը, որը պետական մակարդակով, համակարգեց Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները: 2008թ. սեպտեմբերի 11 – ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց Սփյուռքի նախարարության կանոնադրությունը, աշխատակազմի կառուցվածքը, ըստ որի նախարարությունում գործելու էին հետևյալ բաժինները՝Մամուլի և հասարակայնության հետ կապերի վարչություն, Տեղեկատվության և հեռահաղորդակցության վարչություն, Եվրոպայի հայ համայնքների վարչություն, Ամերիկայի հայ համայնքների վարչություն, ԱՊՀ հայ համայնքների վարչություն, Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչություն, Համահայկական, միջազգային և եկեղեցական կառույցների հետ կապերի վարչություն, Հայրենադարձության և հե-

[1] Տե՛ս Նախընտրական ծրագիր, https://www.president.am /u_files/ file/docs/ program_-arm.pdf

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահ Ն. Գ. Սերժ Սարգսյանի ելույթը երդմնակալության արարողության ժամանակ, https://www. Pres ident.am/hy/statements-and-messages/item/2008/04/09/news-15/, 09.04.2008:

տազոտությունների վարչություն, Համահայկական ծրագրերի վարչություն, Իրավաբանական վարչություն, Ֆինանսատնտեսական վարչություն:[1]

Նախարարության գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության և հայկական Սփյուռքի գործակցության ապահովմանը, դրանց միջև կապերի ամրապնդմանը, հայ ժողովրդի միասնությանը, հայ կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, երիտասարդության, մարզական կյանքի զարգացմանը, հայկական աշխարհի ստեղծմանը նպաստող պայմանների ստեղծումն է՝ Հայաստան – Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման և արդյունքների գնահատման միջոցով:[2] Սփյուռքի նախարարությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքում ընդգրկվեց 2008 թ. հոկտեմբերի 1 – ից:[3]

Իր գոյության ողջ ընթացքում գործունեության լայն ասպարեզով օժտված նախարարությունը իրականացրեց բազմաթիվ և բազմապիսի ծրագրեր, որոնք դարձան ուղղենշային Հայրենիք – Սփյուռք գործակցության բոլոր բնագավառներում:

2009 թ. մշակվեց Հայրենիք – Սփյուռք գործակցության հայեցակարգը, որը սահմանում է Հայաստան – Սփյուռք գործակցության պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, գերակա ուղղությունները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները:[4] Պետական քաղաքականությունը Հայաստան – Սփյուռք գործակցության բնագավառում իրենից ներկայացնում է իրավական, տնտեսական, դիվանագիտական, կրթական, մշակութային, տեղեկատվական, կազմակերպչական հարաբերությունների ամբողջություն, որն ուղղված է հայապահպանության խնդիրների, լուծմանը, Հայաստանի Հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող հարցերում Սփյուռքի համակարգված մասնակցության ապահովմանը:[5] Հայաստան – Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությունն իրականացվում է Հանրապետության

[1] Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Սփյուռքի նախարարության աշխատակազմ պետական կառավարման հիմնարկ ստեղծելու, ՀՀ Սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին, https://www .arlis.am/Document View. aspx?DocID=78354

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին, https://www.arlis.am/ DocumentView.aspx?DocID=4 4544

[4] Տե՛ս «Հայաստան – Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 20 – ի N 34 արձանագրային որոշման հավելված, http://www .mindiaspora.am/am/Govdesicions

[5] Տե՛ս նույն տեղում:

նախագահի ղեկավարությամբ՝ պետական կառավարման մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման, հասարակական կառույցների օժանդակությամբ:[1] Իսկ 2013թ. ՀՀ նախագահի հրամանագրով Սփյուռքի նախարարությունը դարձավ հայկական Սփյուռքի հետ հարաբերությունները կարգավորող գլխադասային մարմին:[2]

Փաստորեն, Հայեցակարգը եկավ լրացնելու Կանոնադրությանը, իսկ 2013թ. նախագահի հրամանագիրը ամբողջացրեց Սփյուռքի հետ տարվելիք հետագա քաղաքականությունը: Սփյուռքի նախարարությունը դարձավ այն հիմնական մարմինը, որը կարգավորեց Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների այս շրջափուլը: Հայոց պետականության և Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների կերտման ճանապարհին Սփյուռքի նախարարության հիմնումը կարելի է համարել դարակազմիկ իրադարձություն: Շարունակվեցին նաև Հայաստան – Սփյուռք համաժողովները, որոնց օրակարգում քննարկման դրվեցին հայությանը վերաբերվող բազմաբնույթ և բազմամասշտաբ հարցեր:

Նախագահ Սերժ Սարգսյանը Հայ – թուրքական հարաբերությունների կարգավորման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործումուներ իր սեփական տեսլականը և նախաձեռնեց Հայաստանի ու Թուրքիայի միջև հարաբերություններն առանց նախապայմանի կարգավորելու գործընթացը:

Նախագահը հունիսի 25-ին Մոսկվայում, հանդիպելով Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, հայտարարեց առաջիկայում հայ – թուրքական հարաբերությունները խթանելու ուղղությամբ նոր քայլեր ձեռնարկելու մասին, ինչպես նաև հայտնեց մտադրությունը՝ հրավիրելու Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին Երևան՝ դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը:[3] 2008թ. սեպտեմբերի 6-ին Ա. Գյուլը Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի հրավերով ժամանեց Երևան՝ ներկա գտնվելու Հայաստան – Թուրքիա ֆուտբոլային հանդիպմանը:[4] 2009թ. հոկտեմբերի 14-ին էլ Ս. Սարգսյանը Բուրսայում ներկա գտնվեց Թուրքիա – Հայաստան ֆուտբոլային հան-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանգիրը Հայկական Սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86167, 20.10.2013:

[3] Տե՛ս **Գեղամյան Վարուժան,** Հայ – թուրքական հարաբերությունների 2008 – 2010թթ. հետահայաց ամփոփում, 01.02.2011, http://www.noravank. am /arm/articles/detail.php?ELEMENT_ID=5338

[4] Տե՛ս Թուրքիայի արտաքին քաղաքականության միտումները վերջին 15 տարում, 16.01.2018, https://www.aravot.am/2018/01/16/931420/

դիպմանը:[1] Այս գործընթացը ստացավ «Ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը: Թեժ քննարկումներ սկսվեցին Հայաստանում, Սփյուռքում, հարևան Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետություններում: Հայ – թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը շարունակվեց Ցյուրիխյան արձանագրությունների կնքմամբ:

2009թ. հոկտեմբերի 10 – ին ՀՀ – ի և Թուրքիայի արտգործնախարարներ Էդուարդ Նալբանդյանը և Ահմեդ Դավութօղլուն ստորագրեցին երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և ՀՀ – ի ու Թուրքիայի միջև հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունները,[2] որոնք պատմության մեջ մտան Ցյուրիխյան արձանագրություններ անունով:[3]

Նախագահ Սերժ Սարգսյանը Հայ – թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում կարևորում էր Հայկական Սփյուռքի կարծիքը, այդ պատճառով էլ, մինչ Ցյուրիխյան արձանագրությունների կնքումը, ձեռնարկեց մեկշաբաթյա համահայկական ուղևորություն: Սփյուռքահայերը Սարգսյանին դիմավորում էին բողոքի տարբեր գործողություններով, նրա հասցեին հնչեցնում էին տհաճ, վեր հանում վիրավորական պաստառներ:[4] Արձանագրության կնքմանը դեմ արտահայտվեցին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը, Հայկական ավանդական կուսակցությունները, սփյուռքյան այլ առաջատար կազմակերպություններ, առանձին անհատներ: Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ սփյուռահայերի մեծագույն մասը հանդիսանում են Հայոց ցեղասպանությունից փրկվածների սերունդներ և Հայ – թուրքական հարաբերությունների լավացմանն ուղղված ցանկացած քայլ մշտապես ունեցել և շարունակում է ունենալ հուզական ընկալում: Սփյուռքը մշտապես շատ բացասաբար է անդրադառնում Հայ – թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների, բարելավման յուրաքանչյուր փորձին: Չնայած դրան, սա կարելի է համարել առաջընթաց քայլ. Հայաստանի Հանրապետությունը՝ նախագահի մակարդակով, իր արտաքին քաղաքականության մեջ փորձում էր, ոչ միայն հաշվի առնել Սփյուռքի կարծիքը, այլև, այդ

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **Արշակյան Գրիգոր,** Թուրք – հայկական հարաբերությունները Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակի պայմաններում, Հայագիտության հարցեր, Հանդես 2 (8), Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2016, էջ 8 :

[3] Տե՛ս **Սաֆարյան Դավիթ, Ոսկանյան Վարդան, Մելիքյան Գուրգեն, Սաֆարյան Ալեքսանդր**, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական – քաղաքական դիսկուրսում, խմբագրությամբ՝ Ռ., Սաֆրաստյանի, Երևան 2017, էջ 110:

[4] Տե՛ս Սերժ Սարգսյանի Ֆուտբոլային դիվանագիտությունը. փաստեր և իրադարձություններ, 10.10.2018, https://www.aniarc.am/2018/10/10/football-diplomacy-2017-tatul-hakobyan-civilnet/

քայլով, փորձում էր նույնացնել Հայրենիքի և Սփյուռքի դիրքորոշումը այդ հարցում:

Արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիան, կտրուկ փոխելով իր դիրքորոշումը և հրաժարվելով «խելամիտ ժամկետներում» և առանց նախապայմանների երկկողմ հարաբերությունները կարգավորելու ձեռք բերված համաձայնությունից, Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում Արձանագրությունների վավերացումը պայմանավորեց ԼՂ - ի հիմնահարցի կարգավորմամբ:[1] 2010թ. ապրիլի 22 – ին, հաշվի առնելով թուրքական կողմի դիրքորոշմամբ ստեղծված իրավիճակը, ինչպես նաև ՀՀ իշխող կոալիցիոն ուժերի քաղաքական խորհրդի համատեղ դիմումը, Արձանագրությունների վավերացման գործընթացը կասեցվեց՝ համաձայն ՀՀ նախագահի հրամանագրի:[2]

Նախագահ Սերժ Սարգսյանի կառավարման տարիներին շարունակվեցին նաև արդեն ավանդույթ դարձած Հայաստան – Սփյուռք խորհրդաժողովները (4, 5, 6): Հերթական խորհրդաժողովը կազմակերպեց արդեն Սփյուռքի նախարարությունը: Հայրենիք – Սփյուռք չորրորդ համաժողովը տեղի ունեցավ 2011թ. սեպտեմբերի 19 – 20 – ընկած ժամանակահատվածում, Երևանում, որին մասնակցում էին 46 երկրերից ժամանած Սփյուռքի 151 կազմակերպությունների 550 ղեկավարներ և ներկայացուցիչներ:[3] Հանդիսավոր նիստում բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց և Մեծի Տանն կիլիկիո կաթողիկոսները, Արցախի նախագահ Բակո Սահակյանը, Հայ Կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչները և այլք:[4] Համաժողովի հանդիսավոր բացմանը հաջորդեց լիագումար նիստը, որի մասնակիցները կամավորության սկզբունքով բաժանվեցին չորս՝ լեզվի և կրթության հիմնախնդիրներ, երիտասարդության հիմնախնդիրներ, Հայոց ցեղասպանության 100 – րդ տարելիցին ընդառաջ՝ տարածաշրջանային հանձնախմբերի գործունեության մասին, Հայաստան – Սփյուռք գործակցության կառուցակարգերի մասին թեմատիկ խմբերի,[5] իսկՀայրենիք – Սփյուռք հինգերերդ համաժողովը արդեն տեղի ունեցավ 2014 թ. սեպտեմբերին, որի աշխատանքները ընթացան չորս հիմնական ուղղություններով՝ 1/Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման գործընթացը, 2/ Սիրիահայ համայնքի հիմնախնդիրները, 3/Հայաստան – Սփյուռք գոր-

[1] Տե՛ս https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Ավելի մանրամասն տե՛ս http://www.mindiaspora.am/am/Conferences/1652

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս նույն տեղում:

ծակցության ներկա հիմնախնդիրներն ու հեռանկարները, 4/Լրագրողների համահայկական յոթերորդ համաժողով:[1] Սեպտեմբերի 20 – ին տեղի ունեցավ Հայաստան – Սփյուռք 5 – րդ համաժողովի վերջին լիագումար նիստը, որին մասնակցում էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:[2] ՀՀ նախագահը իր խոսքում նշեց. «2015թ. մենք ազգովի ոգեկոչելու ենք Հայոց ցեղասպանության 100 – րդ տարելիցը: Այն վերստին հաստատելու է հայրենազրկված հայ ժողովրդի՝ ապրելու և արարելու, հարատևելու կամքն ու վճռականությունը, փաստելու է մեր միասնականության, ազգային իղձերի իրականացման մեր հետևողականությունը: 2015թ. քաղաքական լուրջ նախաձեռնությունների և ձեռքբերումների տարի պետք է դառնա Հայաստան – Սփյուռք – Արցախ եռամիասնության համար»:[3]

Փաստորեն, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը պատշաճ մակարդակով նշելը դարձավ Հայրենիք – Սփյուռք 4 – րդ և 5 – րդ համաժողովների առանցքային թեման, որն էլ, քիչ ավելի ուշ, իր արտահայտությունը գտավ «Հայոց ցեղասպանության 100 – րդ տարելիցի Համահայկական հռչակագրում»՝[4] ամբողջ աշխարհին ներկայացնելով հայ ժողովրդի բոլոր հատվածների՝ Հայաստանի, Արցախի, Սփյուռքի հավաքական կամքը և պահանջատարությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, ինչպես նաև ապագայում ցեղասպանությունների կանխարգելման հարցում:

«Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագիրը կրող Հայաստան – Սփյուռք վեցերորդ համաժողովը անցկացվեց Երևանում 2017թ. սեպտեմբերի 18 – 20 - ը:[5] Համաժողովի ընթացքում տեղի ունեցան ևս երկու լիագումար նիստեր, ինչպես նաև 4 ուղղություններով նախատեսված 16 թեմատիկ նիստեր՝ նվիրված Հայաստանի տնտեսության զարգացմանը, տարածաշրջանային մարտահրավերներին և ազգային անվտանգության օրակարգին, արտաքին քաղաքականության օրակարգին և Հայոց ցեղասպանության հետևանքների վերացմանը, հայապահպանության հիմնախնդիրներին:[6]

---

[1] Տե՛ս http://www.mindiaspora.am/am/Conferences/3418

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Ավելի մանրամասն տե՛ս Հայոց ցեղասպանության 100 – րդ տարելիցի Համահայկական հռչակագիր, http://hpj.asj-oa.am/6113/1/3.pdf

[5] Ավելի մանրամասն տե՛ս http://www.mindiaspora.am/am/HS_6_hamajoxov , տե՛ս նաև Նախագահը մասնակցել է Հայաստան – Սփյուռք համահայկական 6 – րդ համաժողովին, https://www. president.a m/hy/press-release/ item/2017/09/18/President-Serzh-Sargsyan-took-part-in-Armenia-Diaspora-Conference/, Հայաստան – Սփյուռք 6 – րդ համաժողովը, https://www. youtube.com/watch?v=Pz1vQCpYR0A

[6] Տե՛ս նույն տեղում:

Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ նման ձևաչափի հանդիպումները և քննարկումները միշտ էլ տալիս են իրենց դրական արդյունքները: Գաղտնիք չէ, որ հայկական Սփյուռքը չափազանց խայտաբղետ է, իսկ այդպիսի հանդիպումները, ոչ միայն կարևոր են, այլև չափազանց անհրաժեշտ են թե՛ Հայրենիք - Սփյուռք հարաբերությունների հետագա զարգացման, թե՛ սփյուռքյան համայնքների փոխադարձ ճանաչողության (այստեղ հանդիպում են այնպիսի համայնքների ներկայացուցիչներ, որոնք նախկինում իրար մասին ընդհանրապես գաղափար չունեին), թե՛ պայմանավորվածությունների ձեռքբերման և թե՛ Համահայկական խնդիրներին միասնական լուծումներ գտնելու ուղղությամբ: Ի մի բերելով Հայաստան – Սփյուռք համաժողովները և դրանց արդյունքները, կարելի է արձանագրել, որ հիմնականում քննարկվել են Հայաստան – Արցախ – Սփյուռք կենսական նշանակության խնդիրներ, ձեռք են բերվել կարևոր պայմանավորվածություններ, բազմաթիվ կենսական նշանակության հարցեր ստացել են իրենց լուծումները: Սրանք էին հիմնականում այն գերակա ուղղությունները, որոնք բնութագրեցին Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների վերոբերյալ շրջափուլը:

Այսպիսով, Հայրենիք – Սփյուռք հարաբերությունները Հայաստանի Հանրապետության երեք նախագահների կառավարման տարիներին կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝ առաջընթաց, զարգացում, վերելք: Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր – Պետրոսյանը գտնում էր, որ Հայկական Սփյուռքը չպետք է ազդեցություն ունենա Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին, կամ նրա մասնակցությունը պետք է լինի չափազանց աննշան, Հայրենիք – Սփյուռք հարաբերություններում, օրակարգ սահմանողը պիտի լինի Հայաստանի Հանրապետությունը: Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում նա դրսևորել է չափավոր քաղաքականություն՝ Հայ Դատի հետապնդումը թողնելով սփյուռքյան կառույցներին:Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կառավարման տարիները աչքի ընկան Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների զարգացմամբ:Երկրի ներքինև արտաքին կառավարման շատ հարցերում նա կարևորեց Սփյուռքի դերակատարությունը:Երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի կառավարման տարիները բնութագրվեցին Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների սրընթաց վերելքով: Հիմնադրվեց Սփյուռքի նախարարությունը, շարունակվեցին նախորդ վարչակարգի կողմից ստեղծված Հայաստան – Սփյուռք խորհրդաժողովները, կազմակերպվեցին տարբեր ձևաչափերի միջոցառումներ, իրականացվեցին բազմաթիվ ու բազմապիսի ծրագրեր: Սերժ Սարգսյանի հրաժարականով ավարտվեց Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների վերոնշյալ շրջափուլը:

Майрунуш Погосян, Эволюция отношений Родины и Диаспоры во время правления трех президентов Армении - Цель статьи - представить динамику развития отношений между Родиной и Диаспорой в период правления трех президентов Армении - Левона Тер-Петросяна, Роберта Кочаряна и Сержа Саргсяна. Поскольку позиции трех президентов Армении по поводу отношений Родина-Диаспоранесколько отличались друг от друга, задачабылапоставленав том, чтобы исследовать, анализировать, координировать развитие этих отношений на основе научных исследований, статей, прессы, интернета и других источников, которые, по нашему мнению, имют актуальное значение.Представлена сдержанность отношений Армении –Диаспоры при президенте Л.Тер-Петросяне, развитие при президенте Р. Кочаряне и их укрепление при президенте С. Саргсяне.

Изученная динамика позволяетсделать вывод о том, что во время правления трех президентов Республики Армения отношения между Родиной и Диаспорой развивались в направлении прогресса, развития и подъема.

Mayrunush Poghosyan, Evolution of Homeland - Diaspora relations during the rule of three Presidents of Armenia - The aim of the article is to represent the dynamics of the development of Homeland - Diaspora relations during the rule of three different presidents of Armenia - Levon Ter - Petrosyan, Robert Kocharyan and Serzh Sargsyan. Since the positions of three presidents of Armenia regarding the relations of Homeland-Diaspora were somewhat different from each other, the main tasks held in the article are as follows: to explore, analyze, coordinate and cover the development of these relations based on some scientific studies, articles, press, the Internet and other sources. The restraint of relations between Armenia and Diaspora under President L.Ter-Petrosyan, the development under President R. Kocharyan and their strengthening under President S. Sargsyan are presented in this article.

Summing up, one may conclude, that during the rule of the three presidents of the RA, the Homeland-Diaspora relations have been pursued in the direction of progress, development and rise.